



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԵՎ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐ

Երևան-0010, Հանրապետության հր. Կառավարական տուն 3

“25” 12 2020թ.

N..... 87-Ն.....

Հ Ր Ա Մ Ա Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԵՎ
 ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ <<ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ԵՐԿՐԱՔԱՆԱԿԱՆ
 ՖՈՆԴ>> ՊՈԱԿ-Ի ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ, ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
 ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԵՎ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐԻ 2020 ԹՎԱԿԱՆԻ
 ՀՈՒՆՎԱՐԻ 31-ԻՆ ՀԱՍՏԱՏՎԱԾ <<ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ԵՐԿՐԱՔԱՆԱԿԱՆ ՖՈՆԴ>> ՊՈԱԿ-Ի
 ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՁԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Նորմատիվ իրավական ակտերի մասին>> Հայաստանի
 Հանրապետության օրենքի 37-րդ հոդվածով, <<Պետական ոչ առևտրային
 կազմակերպությունների մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածի
 2-րդ մասի <<ը>> կետով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության վարչապետի
 2019 թվականի հունիսի 1-ի N 659-Լ որոշմամբ հաստատված հավելվածի 19-րդ կետի 20-րդ
 ենթակետը և նկատի ունենալով Հայաստանի Հանրապետության տարածքային
 կառավարման և ենթակառուցվածքների նախարարի 2020 թվականի հունիսի 30-ի N 47-Լ
 հրամանով հաստատված <<Հանրապետական երկրաբանական ֆոնդ>> ՊՈԱԿ-ի
 կանոնադրության 23-րդ կետի <<ժա>> ենթակետը՝

Հ Ր Ա Մ Ա Յ ՈՒ Մ Ե Մ

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և
 ենթակառուցվածքների նախարարության <<Հանրապետական երկրաբանական ֆոնդ>>
 ՊՈԱԿ-ի հաստիքացուցակը՝ համաձայն հավելվածի:

2. Ուժը կորցրած ճանաչել Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարի 2020 թվականի հունվարի 31-ին հաստատված <<Հանրապետական երկրաբանական ֆոնդ>> ՊՈԱԿ-ի հաստիքացուցակը:

12/25/2020

X 

ՍՈՒՐԵՆ ՊԱՊԻԿՅԱՆ

Signed by: PAPIKYAN SUREN 3604860490

Ս. Պապիկյան

